

զինուորականներու նման ցոյց պիտի տար իր ցեղին հանձարը, եթէ սակայն անողոք թոքախտը թոյլ տար գործածել իր ուժերը: Տակաւին վարժարանը չաւարտած՝ Գաբրիէլ երկու ծանր հիւանդութիւններու դիմադրած էր արդէն, — ժանտակերպ տենդի եւ թոքատապի, — որոնք բոլորովին խանգարած էին իր առողջութիւնն եւ ուժասպառ ձգած զինք: Եւ պատերազմական ուսմանց մէջ քաջ հանդիսացող երիտասարդն ստիպուած էր այս անգամ պատերազմելու ուրիշ ահաւոր թըշնամիի՝ Քոխի մանրէներուն դէմ, որոնց յաղթող պիտի հանդիսանար եթէ սակայն *influenza*-ի մանրէները միւսներուն օգնութեան չհասնէին:

Գաբրիէլ զգալով իր վիճակին ծանրութիւնը, իր Կարապետ եղբօր միջոցով դիմեց մայր-կայսրուհիին, — որուն ոսկերչապետն էր Կարապետ, — խնդրելով որ ազատ արձակուի զինուորական ծառայութենէ: Խնդիրքը լսելի կըլլայ. եւ Գաբրիէլ կը նետուի առեւտրական ասպարէզը, մտնելով Կ. Պոլսի Ոսկերիչներու շուկան: Հոն ժամանակ մը փորձառութիւն ստանալէ ետք՝ 1879-ին Պարիս կուգայ կը հաստատուի վերջնապէս, իբրեւ ադամանդավաճառ: Այս միջոցին է որ Գաբրիէլ, իբրեւ հայրենասէր, ուսման ծարաւի եւ գիտութեան մարդ, առիթը կ'ունենայ ո՛չ միայն գլուխ կենալու հայրենասիրական գործերու ու ժողովներու, այլ եւ սատար հանդիսանալու ուսման համար Պարիս դիմող երիտասարդներու: Ահա թէ ի՞նչ կըսէ Գաբրիէլի մահուան առթիւ Հայր Կիսամօտեայ հանդէսի պարիսեան Թղթակիցը. « 1880ին Հայաստանի մեծ սովին առթիւ ի Փարիզ կազմեալ սովելոց յանձնաժողովոյն գործօն անդամն եղած է: Պահպանիչն էր Փարիզու Հայկազեան Ուսումնասիրաց ընկերութեան: Անդամ էր շատ մը մարդասիրական ընկերութեանց: Հիմնադիրն եւ ոգին եղած է Փարիզու Հայ Հայրենասիրաց Միութեան: 1884ին յղացած է եւրոպական զանազան քաղաքաց մէջ հաստատեալ Հայ Հայրենասիրաց Միութեանց գործունէութեանց կեդրոնացման հարկն. եւ նոյն տարւոյն այս նպատակաւ ի Փարիզ գումարեալ պատուիրակաց ժողովոյն անդամ եղած է, իբր պատուիրակ Փարիզու Հայ Հայրենասիրաց Միութեան: Նպաստած է Հայկական հարցի բերան թերթերու. մեծանուն հանգուցեալն շուրջ 40 տարիներէ ի վեր ազգային ամէն կարգի շարժմանց մէջ բաժին ունեցած է իբր գործիչ եւ նա մանաւանդ խրախուսիչ գործիչներու: Հայկական խնդիրն իւր մտածութեանց գլխաւոր առարկան էր եւ առ այս երբէք գործելէ եւ նա մանաւանդ զոհելէ չէ դադրած: » (Հայր, 1892, փետրվ. 15:) Գրեթէ այս ոճով կը խօսի նաեւ « Լ'Արմէնի » իր 1892 տարւան փետրվ. եւ մարտ թիւերուն մէջ:

Հանգուցեալին կեանքէն նշանակելի է սա պարագան, որ « իւր մահուան ձգնաժամին բանդագուշանաց մէջ շարունակ խօսած է Հայու փրկութեան եւ Հայաստանի վերականգնման նկատմամբ, եւ ախ, Հայաստան բացազանջութիւնն եղած է իւր վերջին հասկանալի բառերն », ինչպէս կը նկարագրէ Հայրի մի եւ նոյն Թղթակիցը: